

առ վայր մի¹ զպատճառանաւք վիրաւորիլն վասն երեցունց աշխարհացն եւ բազմութեանց ի նոսա արանց եւ կանանց:

ԻԸ. Եւ այնպէս միաբանեալք ամենեքեան յանձն առնուին կատարել խաբէութեամբ զիրաման թագաւորին, եւ երթեալք ի տուն մոխրանոցին՝ կէսքն ի նոցա ցուցանէին, այլ ոչ ամենեքեան, զպատճառանաւք եւ ոչ ճշմարտութեամբ զխոնարհումն գլխոց իւրեանց սնոտի պաշտամանն: 2 Եւ ոմանք թեպէտ եւ գիտէին զանյարական գլորումն, այլ ցանկացեալք² աշխարհիս փառաց՝ փոխանակէին³ զփառս անեղծին Աստուծոյ ընդ եղծանելի եւ անցաւոր կենաց աշխարհիս:

3 Եւ զայն տեսեալ թագաւորին Պարսից եւ ամենայն մեծամեծաց դրանն եւ մոզուցն՝ նուէրս ազգի ազգի բազում ինդութեամբ մատուցանէին աստուածոց իւրեանց: 4 Խրախ մեծ ուրախութեան առնէին յաւուրն յայնմիկ, հաշուելով այն ար լինել անշարժ հաստատութիւն թագաւորութեան իւրեանց, կեալ խաղաղութեամբ աներկիւղ այնուհետեւ յամենայն թշնամեաց: 5 Եւ ազուցեալ զտանուտեարսն եւ զսեպուհսն զերեցունց աշխարհացն, զՅայոց, զՎրաց եւ զԱղուանից, ի հանդերձս թագաւորականս զարդարէին. այլ եւ բազում եւ այլ ազգի ազգի պարգեւաւք եւ պատուաւք, զիւղաւք⁴ եւ ազարակաւք, ըստ իւրաքանչիւր ուրուք պիտոյից, լցուցանէին զամենեսեան. զորս եւ⁵ ի հրաժեշտի⁶ կացուցեալ՝ փութացուցանէին հասանել յիւրաքանչիւր յաշխարհս⁷: 6 Տուեալ ընդ նոսա բազմութիւն սուտ վարդապետաց, զոր եւ մոզ անուանեն, յորդորէին ուսանել զուսմունս ծաղրելի շնչմանց եւ ընդունչսարկու քարթնջմանց խաւսս, որպէս զաւճակոչսն եւ զորովայնախաւսս. պատուեր տային՝ յերեսին յաշխարհսն կարգել զխաբէութեան դպրոցս եւ ուսուցանել առ հասարակ զբնաւս, զարս եւ զկանայս, զուսմունս մոզուցն:

7 Որոց առեալ ի յանձն՝ զբազմութիւն մոզուցն տանել ընդ ինքեանս յաւժարէին: 8 Երթեալք այնուհետեւ հրաժարեալք ի թագաւորէն Յազկերտ եւ ի մեծամեծ աւագանւոյն զբանն՝ գովութիւնս⁸ սուտս եւ շնորհակալութիւնս խաբէութեամբ իւրաքանչիւր ոք ի պատճառելոցն առ վայր մի ըստ իւրում զաւրելոյ իմաստից մատուցանէին թագաւորին եւ ամենայն աւագանւոյն Ա-

1 ՁՏՏ. յանձն առ վայր մի

2 Աւտ. ցանկացոյք

3 ՏՏ. փոխանակեցին

4 Ձ. գելոօք

5 Աւտ. չիք եւ

6 Ձ. ի հրաժեշտի

7 Աւտ. յիւրաքանչիւր աշխարհս. ԲԳւտ. ...աշխարհ

8 Ձ. գովութիւն